02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

20 (1419) • 31 մայիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Հայաստանի Հանրապետությունը 101 տարեկան է

1918 թ. մայիսի 28-ին իրականություն դարձավ մեր դարավոր՝ պետություն, պետականություն ունենալու երազանքը: Կայանում էին պետական ինստիտուտները. պատմական աննախադեպ պայմաններում կայանում էր Հայաստան պետությունը:

Առաջին հանրապետության կառավարության հռչակած դեկլարացիայի առաջին կետերից մեկով ամրագրված էր՝ երկրում հաստատել տարրական իրավակարգ, ապահովել քաղաքացիների անձի եւ գույքի անձեռնմխելիությունը:

«Հիսուն հազարի հասնող որբերի մի ողջ սերունդ խնամելն ու դաստիարակելը այսօր մեզ համար ինքնաօգնության լավագույն ակտերից մեկն է, որը պետք է կատարենք մեր բովանդակ ուժերը լարելով եւ մեր հոգու ողջ կորովը կյանքի կոչելով: Կոչ եմ անում ամենքին, որոնց կրծքի տակ դեռ չի մեռել մարդասիրության զգացմունքը, որոնք դեռ չեն կորցրել ցեղի բնազդը, որոնք գիտակցում են սեփական շահը իրենց զավակների, օգնության եկեք ձեր կառավարությանը, փրկեք անկումից վաղվա հույսը ձեր հայրենիքի». Արամ Մանուկյանի այս կոչը հոգու կանչ էր, հոգու թելադրանք:

1918 թ. հուլիսի 24-ին հրապարակվեցին կառավարության կազմը եւ ծրագիրը, որով նախատեսվում էր պայմաններ ստեղծել քայքայման գործընթացը կասեցնելու եւ պետական շինարարության համար: Վարչապետը Հովհաննես Քաջազնունին էր, ներքին գործերի նախարարը՝ Արամ Մանուկյանը:

Նորանկախ պետության առաջ ծառացած խնդիրներն անչափ շատ էին՝ տարատեսակ ու տարաբնույթ. օրենսդիր իշխանությունը՝ պառլամենտը, նոր-նոր էր սկսում գործել, մինչդեռ հասարակական հարաբերությունները շուտափույթ լուծում էին պահանջում: Այս պայմաններում ներքին գործերի նախարարից պահանջվում էր ապագային միտված եւ գրեթե անսխալական որոշումների կայացում եւ դրանց իրագործման համար գործուն կառույցների ստեղծում:

էջ 2

Խորհրդակցություն ոստիկանությունում

Մայիսի 25-ին ոստիկանությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը: Մասնակցում էին կոլեգիայի անդամներ, կենտրոնական վարչակազմի, տարածքային վարչությունների ու բաժինների պետեր:

Վալերիյ Օսիպյանը խոսեց հանցագործությունների ու բացահայտումների մասին: Նա նշեց, որ պետք է արդյունավետ աշխատանքներ իրականացնել նաեւ նախկինում կատարված հանցագործությունները բացահայտելու ուղղությամբ: Ոստիկանության պետը հանձնարարեց եւս մեկ անգամ զրուցել տուժողների հետ, ի հայտ բերել նոր հանգամանքներ, որոնք կօգնեն բացահայտելու հանցագործությունը:

Ոստիկանության պետը հանձնարարեց ակտիվացնել աշխատանքները ապօրինի պահվող զենք-զինամթերք հայտնաբերելու, թմրամիջոցների անօրինական շրջանառության դեպքեր բացահայտելու, ինչպես եւ հետախուզվողներին հայտնաբերելու ուղղությամբ:

Վալերիյ Օսիպյանը նշեց նաեւ, որ շուտով կամփոփվի այս տարվա վեց ամիսների ոստիկանության աշխատանքը: Ամփոփումից հետո բացասական պատկեր ունեցող ստորաբաժանումներում կիրականացվեն կադրային փոփոխություններ:

Քննարկվեցին նաեւ օպերատիվ գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

Խորհրդակցության ավարտին տարբեր հանցագործությունների բացահայտման համար ոստիկանության մի շարք ծառայողներ արժանացան դրամական խրախուսանքների:

Սպանություն Բասեն գյուղում

Մայիսի 24-ի լուսադեմին ոստիկանության Ախուրյանի բաժին ահազանգ ստացվեց, որ Բասեն գյուղում դանակահարություն է կատարվել: Ահազանգին արագ արձագանքած ոստիկանության Ախուրյանի բաժնի օպերատիվ խումբը, տեղում իրականացնելով հետախուզական միջոցառումներ, պարզեց, որ Բասեն գյուղի 59-ամյա մի բնակիչ վաղ առավոտյան դանակահարել է հարեւանությամբ բնակվող քրոջը, որը տեղում մահացել է, ապա դանակահարել է ննջարանում գտնվող քրոջ որդուն: 25-ամյա երիտասարդը դիմադրել էր, ինչի արդյունքում քեռին հեռացել էր:

Մարմնական վնասվածքներ ստացած երիտասարդը տեղափոխվեց «Գյումրի» բժշկական կենտրոն: Ոստիկանության ծառայողներն անհապաղ որոնողական միջոցառումներ ձեռնարկեցին կասկածյալին հայտնաբերելու ուղղությամբ: Որոշ ժամանակ անց տան նկուղում հայտնաբերվեց տղամարդու դին: Նա ինքնասպանություն էր գործել՝ առաստաղից կախվելով:

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները ձեռնարկում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ու քննչական գործողություններ՝ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

Քաղաքացիների ընդունելություն

Մայիսի 27-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց քաղաքացիների: Նրանք ոստիկանության պետին հիմնականում ներկայացնում էին բողոքներ, դիմումներ ու առաջարկություններ:

Քաղաքացիների դիմումները կապված էին նախկինում կատարված ու չբացահայտված հանցագործությունների հետ, որոշ դիմումատուներ տուժել էին ոստիկանների գործողություններից, կային նաեւ քաղաքացիներ, որոնք տուժել էին այլ գերատեսչությունների գործողություններից:

Մի քանի հարց տեղում լուծում ստացավ, որոշ խնդիրների էլ ընթացք տալու համար հանձնարարվեց համապատասխան ստորաբաժանումներին: Այն հարցերը, որոնք ոստիկանության իրավասությունից դուրս էին, պարզաբանվեցին եւ ուղղորդվեցին հասցեատերերին:

Հանդիպման էին ներկայացել նաեւ նախկին ոստիկաններ, որոնք ցանկանում են վերականգնվել ոստիկանությունում ծառայության: Նրանց դիմումներն ուղարկվեցին ոստիկանության կադրային քաղաքականության վարչություն՝ ստուգումներ իրականացնելու համար:

Դանակահարել էր կնոջը

Մայիսի 17-ին հիվանդանոցից ոստիկանության Արարատի բաժին ահազանգ ստացվեց, որ բուժօգնության է տեղափոխվել Արարատ քաղաքում ապրող 38-ամյա մի կին՝ կրծքավանդակի կտրած-ծակած վերքով, ներքին արնահոսությամբ:

Արարատի ոստիկանները բացահայտեցին հանցագործությունը: Պարզվեց, որ կինը հյուրընկալել էր նախկին ամուսնուն: Նրանց միջեւ վեճն ավարտվել էր կնոջ դանակահարությամբ: 42-ամյա կասկածյալը հայտնաբերվեց:

Դանակահարված կինը հիվանդանոցում մահացավ:

Քրեական գործ է հարուցվել:

ՀՀ ոստիկանությունը հայտարարում է ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի եւ քոլեջի 2019/2020 ուստարվա պետպատվերի շրջանակներում ընդունելություն

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան իրականացնում է «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա ուսուցման ձեւով ուսուցում: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանության սպա» որակավորմամբ առկա ուսուցման ձեւով ուսուցում: Ուսման տեւողությունը 2 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Ուշացած պատիժ

Կեղծված փաստաթղթեր ներկայացնելով տարբեր կազմակերպություններ ու բանկեր՝ ստացել էր օգնություն ու վարկ: էջ 3

Հանցանք եւ պատիժ

Վիրավոր տղամարդուն հիվանդանոց տեղափոխեցին երեք օր անց, երբ պատռված աղին մահացու գործն արել էր... էջ 6

Դաժանությամբ ինքնահաստատվողը

Կնոջ ու երեխաների լացի ձայնից դուրս եկած հարեւանները խանգարեցին, որ տղամարդը շարունակի դաժանությունը: էջ 7

Հայաստանի Հանրապետությունը 101 տարեկան է

Սկիզբը՝ էջ 1



1918 թ. հուլիսին ՆԳ նախարարությանն անցան Երեւանի նահանգային գործադիր իշխանության փոստը եւ հեռագրատունը, հաղորդակցման ուղիների վարչությունը, սանիտարաբժշկական վարչությունը, երկաթգիծը, պետական գույքի վարչությունը, պարենավորման, լուսավորության բաժինները:

Ռազմական դրության մեջ գտնվող նորանկախ պետության կայացման փուլին սովորաբար բնորոշ է հանցավոր տարրերի աշխուժացումը. բնակչության ձեռքին ապօրինի զենք ու զինամթերք է հայտնվում, ինչն ավելի է սրում երկրի ներքին կայունությունը, նպաստում հանցագործությունների աճին: Բնակչության մոտ հայտնված զենքն օգտագործվում էր ոչ միայն պաշտպանական, այլեւ հանցավոր նպատակներով: Ներքին գործերի նախարարության առջեւ ծառացած խնդիրներից մեկը նաեւ ապօրինի զենք-զինամթերքի հայտնաբերումն ու առգրավումն էր, ինչի մասին վկայում են արխիվային փաստաթղթերը:

Մեր առաջին ներքին գործոց մարմինները, իրենց գործառույթներից զատ, նաեւ հայրենիքի սահմաններն էին պաշտպանում, դիվերսիոն խմբեր վնասազերծում, գաղթականության եւ տեղացի բնակչության հրատապ սոցիալական խնդիրները լուծում, ազգամիջյան բախումներ կանխում: Աննախադեպ ծանր պայմաններում կայանում էր ոստիկանության կառույցը, օրենսդրական դաշտը, որի շրջանակներում գործելու էին ներքին գործերի մարմինները:

Ներքին գործերի նախարարությունը հանրապետության բնականոն կյանքի ապահովման գրեթե միակ երաշխավորն էր: Արամ Մանուկյանը խիստ կարեւորում էր երկրի տնտեսական հիմքի ամրապնդումը եւ ժամանակի ու միջոցների սղության պայմաններում առկա խնդիրները լուծում էր հնարավորինս արդյունավետ: Կայացված յուրաքանչյուր որոշում ուղղված էր երկրում կարգ ու կանոնի հաստատմանն ու պահպանմանը:

Արամ Մանուկյանի հրամանով ապրանքների ներկրումը հայտարարվեց ազատ, իսկ անհրաժեշտ մթերքների արտահանումն արգելվեց, կազմակերպվեց բնակչությանը հացի բաշխումը, անթույլատրելի համարվեց պատժիչ զորախմբերի ուժի կիրառումը գյուղացիներից հարկեր հավաքելու ընթացքում: Ներքին գործերի նախարարության կողմից իրականացվող միջոցառումների արդյունքում տնտեսությունն ակտիվացման նշաններ էր ցույց տալիս:

Արամ Մանուկյանի ազդեցիկ դիրքը եւ հեղինակությունը օգնեցին զսպել ոչ պետականամետ դրսեւորումները, անձնային, կուսակցական շահերը ստորադասվեցին պետական շահերին: Երկրում սկսեց գործել օրենքը, ճեղքվեց անպատժելիության մթոլորտը, աշխուժացավ տնտեսությունը: Քաղաքացիները, մասնավորապես՝ գործարարները, համեմատաբար պաշտպանված էին զգում:

Հայ ժողովուրդը, հավատալով հաղթելու, ծանր փորձությունները հաղթահարելու, սեփական ճակատագիրը տնօրինելու իր ուժին, կերտում էր Հայաստանի Հանրապետությունը:

Դասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Սպանություն կատարած անձը հայտնաբերվեց

Մայիսի 22-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները, քրեական հետախուզության գլխավոր վարչության, Արմավիրի մարզային վարչության եւ Քանաքեռ-Զեյթունի բաժնի գործընկերների հետ համատեղ, հայտնաբերել են սպանության համար հետախուզվող 52-ամյա մի տղամարդու:

Դեպքը կատարվել էր 2018 թվականի ապրիլի 23-ին, Էջմիածնի կենտրոնական հրապարակում: Ծագած վեճի ընթացքում 52-ամյա տղամարդը դանակով խփել էր Էջմիածնի մի բնակչի կրծքավանդակին: Հիվանդանոց տեղափոխված տղամարդը դեպքից երեք ժամ անց մահացել էր:

Հարուցվել էր քրեական գործ՝ սպանության հատկանիշներով: Անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ու քննչական գործողություններով դեպքի մի շարք հանգամանքներ պարզելուց հետո որոշում էր կայացվել 52-ամյա տղամարդուն ներգրավել որպես մեղադրյալ եւ հայտարարել հետախուզում:

Հայտնաբերված հետախուզվողին ոստիկանները ներկայացրել են Վաղարշապատի քննչական բաժին:

Նախաքննությունը շարունակվում է:

Մ. Ս.

Թրաֆիքինգի դեպքեր են բացահայտվել

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Երեւանում բնակվող 43-ամյա մի տղամարդ ու 49-ամյա մի կին մայրաքաղաքի կենտրոնում կազմակերպում են փողոցային մանր առեւտրով զբաղվող անձանց դրամահավաքի աշխատանքներ եւ, բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով, վերցնում են առեւտրով վաստակած գումարի մի մասը՝ նրանց ենթարկելով շահագործման:

Օպերատիվ տվյալների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ տղամարդն ու կինը 2016-2019 թվականների ընթացքում մուրացկանությամբ եւ փողոցային մանր առեւտրով զբաղվող մի խումբ անձանց դրել են շահագործման վիճակի մեջ՝ նրանց կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով: Նույնիսկ նրանցից մեկին հարկադրել են մուրացկանությամբ զբաղվել: Կինը եւ տղամարդը ամեն օր վերցրել են այդ անձանց վաստակած ողջ գումարը կամ գումարի մի մասը:

Դեպքի առթիվ ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել մարդու թրաֆիքինգի, այն է՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, երկու կամ ավելի անձանց նկատմամբ, նյութական օգուտ խոստանալու միջոցով, շահագործման նպատակով հավաքագրելու, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով եւ հարկադրանքի այլ ձեւերով շահագործման վիճակի մեջ դնելու հատկանիշներով:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

Բացահայտում են Եղեգնաձորի ոստիկանները

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի քրեական հետախույզները տարաբնույթ միջոցառումների արդյունքում մայիսի 20-ին օպերատիվ տվյալներ ստացան, որ Սիսիանում ապրող երկու երիտասարդ մայիս ամսվա ընթացքում Եղեգնաձորի «Ճանշին»-ի վարչական տարածքից եւ կոշիկի նախկին արտադրամասից գողություններ են արել: Մասնավորապես՝ «Ճանշին»-ի պահեստից գողացել են բետոնախտացուցիչ, խոտհնձիչ, մի քանի տասնյակ մետր եռակցման մալուխ եւ այլն: Կոշիկի նախկին արտադրամասի տարածքից էլ հափշտակել էին ալյումինե դուռ:

Օպերատիվ տվյալների մշակման արդյունքում Եղեգնաձորի ոստիկանները պարզեցին երիտասարդների ինքնությունը՝ շարունակելով նրանց հայտնաբերման միջոցառումները: 28 եւ 18-ամյա երիտասարդները շուտով հայտնաբերվեցին Եղեգնաձորում եւ կասկածանքով բերման ենթարկվեցին ոստիկանության բաժին: Նրանք խոստովանական ցուցմունք են տվել:

Հետագա միջոցառումներով քրեական հետախույզները տարբեր վայրերում հայտնաբերեցին գողացված ապրանքները, որոնք առգրավվել են:

Քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Չարաշահումներ Վանաձորում

Մայիսի 10-ին ոստիկանության Բազումի բաժնում Լոռու մարզի դատախազությունից տեղեկություններ ստացվեցին 2014-2017 թթ. «Լոռու ՀՇՇ» ՓԲ ընկերության եւ «Արգիշտի-1» ՍՊ ընկերության կողմից Վանաձորի փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների ընթացքում ենթադրյալ խախտումների վերաբերյալ:

Իրավապահները պարզել են, որ Վանաձորի համայնքապետարանի պաշտոնատար անձինք, 2016 թվականին համայնքային բյուջեից հատկացված միջոցներով Վանաձորի փողոցների նորոգման աշխատանքների ընթացքում, առանց փաստացի ուսումնասիրության, շահագործման են հանձնել «Լոռու ՀՇՇ» ՓԲ ընկերության կողմից անորակ կատարված աշխատանքները:

Չեռք են բերվել նաեւ տվյալներ, որ համայնքապետարանի իրավասու պաշտոնատար անձինք նորոգման աշխատանքները կատարելու նպատակով հայտարարված մրցույթում նախապատվություն են տվել ավելի ցածր գնով՝ մոտ 70 միլիոն 800 հազար դրամ հայտ ներկայացրած «Լոռու ՀՇՇ» ՓԲ ընկերությանը, որի հետ 2016 թ. մայիսի 16-ին մոտ 84 միլիոն դրամի նորոգման աշխատանքների կատարման պայմանագիր է կնքվել: Սակայն հետագայում առանց պատշաճ հիմնավորման, գինն էապես ավելացրել են, եւ գումարը կազմել է շուրջ 101 միլիոն դրամ՝ համայնքին պատճառելով մոտ 16 միլիոն 900 հազար դրամի վնաս:

Հարուցվել քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ուշացած պատիժ

Շիրակի մարզի գյուղերից մեկի բնակիչները 1998-ին Ալեքսան Հովհաննիսյանին գյուղապետ ընտրեցին՝ հավատով, որ տեր կկանգնի գյուղի հազարումի հոգսերին, նախընտրական խոստումներին համահունչ՝ կփորձի հնարավորինս լուծել ծննդավայրի հիմնախնդիրները, կթեթեւացնի համագյուղացիների՝ անտերության մատնված շատ հարցեր: Հավատացին ու սպասեցին իրենց համար դեռեւս ոչ այնքան հստակ մեխանիզմներ ունեցող տեղական ինքնակառավարման մարմնի եւ նորընտիր գյուղապետի գործողություններին, ակնկալվող բարեփոխումներին:

Ալեքսան Հովհաննիսյանը գյուղի համար ինչ-որ բան արե՞ց-չարե՞ց պաշտոնավարության երեք տարիներին՝ համագյուղացիների գնահատելու խնդիրն է, բայց որ ճարպկորեն կարողացավ ի նպաստ սեփական բարօրության գործել՝ «գնահատեցին» իրավապահները:

Չարաշահելով պաշտոնեական դիրքը՝ գյուղապետը կեղծված փաստաթղթեր ներկայացրեց տարբեր կազմակերպություններ ու բանկեր եւ ստացավ տասը հազար դոլարի օգնություն ու վարկ: Իբր գյուղի համար ինչ-ինչ ծրագրերի ծառայեցնելու նպատակով ստացավ փողն ու լուծեց... սեփական բարեկեցությանը միտված ծրագրեր:

Գյուղապետի հանցավոր արարքը իրավապահներին հայտնի դարձավ 2006 թվականին, երբ նա արդեն գյուղապետ չէր, ավելին՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից շա՛տ հեռու էր:

Ծննդավայր ու հայրենիք լքելը, սակայն, ամենեւին չի նշանակում խուսափել պատասխանատվությունից, պատժից, մարսել գործած հանցանքը:

Փաստով քրեական գործ հարուցվեց: Ալեքսան Հովհաննիսյանին հայտնաբերելու ուղղությամբ միջպետական հետախուզում հայտարարվեց:

Տարիներն ու տարածությունը իսկապես որ փուչ համախոհներ էին, անզոր՝ պատսպարելու պաշտոնեական դիրքի չարաշահումով տեղական ինքնակառավարման ինստիտուտի վրա ստվեր գցած, մարդկանց վստահությունը չարաշահած մարդուն:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ որոնողական միջոցառումների ու ռուս գործընկերների հետ համագործակցության արդյունքում հնարավոր եղավ պարզել, որ նախկին գյուղապետը թաքնվում է Ռուսաստանի Դաշնության Տյումեն քաղաքում: Հենց այնտեղ էլ հայտնաբերվեց եւ ՔՀԳՎ օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան: Վերադարձավ, որ օրենքի առաջ պատասխան տա տարիներ առաջ կատարած հանցագործության համար:

Տասներկու տարի առաջ գողություն արել ու երկրից անհետացել էր նաեւ Աբովյան քաղաքի բնակիչ Կարապետ Բաղդասարյանը: 2008 թվականի հուլիսի լույս 2-ի գիշերը երկու ընկերների հետ մտել էին Նոր Հաճըն քաղաքի բնակիչներից մեկի տուն ու գողացել երկու միլիոն դրամ արժողությամբ իրեր:

Հանցակիցները հայտնաբերվեցին, խոստովանական ցուցմունք տվեցին՝ մատնանշելով նաեւ երկրից հեռացած հանցընկերոջը, եւ կրեցին համապատասխան պատիժ:

Կարապետ Բաղդասարյանը ոստիկանությունում հայտնվեց տասներկու տարի անց: Հայտնվեց, որ վերականգնվի արդարադատությունը, որ ամրագրվի հատուցման ժամի անխուսափելիությունը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Կողոպուտը բացահայտվեց

Դեպքը մայիսի 18-ին էր կատարվել՝ մայրաքաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Առավոտյան Դրոյի փողոցի շենքերից մեկի մոտ անհայտ անձը թիկունքից մոտեցել էր մի կնոջ, պարանոցից պոկել երկու ոսկյա շղթա՝ խաչով ու կախազարդով, եւ փախել:

Կատարվածից րոպեներ անց օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում ահազանգ ստացվեց:

Կողոպուտը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ քրեական հետախույզները տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Ուսումնասիրվեցին հարակից շենքերի եւ օբյեկտների մոտ տեղադրված տեսախցիկների տեսագրությունները: Դրոյի փողոցի տեսահսկող սարքերը ֆիքսել էին երիտասարդին: Նա էր, ում նկարագրել էր տուժողը: Սակայն անհրաժեշտ էր լրացուցիչ տվյալներ ձեռք բերել, պարզել կասկածյալի ինքնությունն ու գտնվելու վայրը եւ, որ ամենակարեւորն էր, հայտնաբերել նրան:

Որոնողական աշխատանքները շարունակվեցին, եւ օրեր անց տեղեկություններ ստացվեցին, որ կողոպուտը հնարավոր է կատարած լինի Գոգոլի փողոցի 30-ամյա մի բնակիչ: Մայիսի 21-ին նա Անդրանիկի փողոցում հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին:

Պարզվեց՝ նախկինում տարբեր հանցագործությունների համար մի քանի անգամ դատապարտվել էր եւ ամիսներ առաջ էր համաներմամբ ազատ արձակվել:

Հարուցվել է քրեական գործ:

Գրպանահատը բերման ենթարկվեց

Հատկապես աշխատանքային օրվա ավարտին հասարակական տրանսպորտը լիքն է ուղեւորներով, հանգամանք, որից գրպանահատներն օգտվում են:

Մայիսի 10-ին երթուղայիներից մեկում այդպես էլ եղել էր: Ուղեւորուհու պայուսակից դրամապանակ էին գողացել, որի մեջ փող ու բանկային քարտեր էին: Տուժողը ոստիկանություն չէր դիմել, իրավապահներն էին պարզել եղելությունը եւ հայտնաբերել գրպանահատին:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, Հալաբյան փողոցից ոստիկանության Մաշտոցի բաժին բերման ենթարկեցին Կապանի բնակիչ Խաչիկ Սարգսյանին, որը խոստովանեց՝ թիվ 28 երթուղու ավտոբուսի սրահում ուղեւորուհու դրամապանակը գողանալուց հետո փորձել էր բանկային քարտով գումար կանխիկացնել, սակայն չէր կարողացել:

Անձնական խուզարկությամբ դրամապանակը հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

Մեղադրանքը՝ գողություն

Ապրիլի 29-ին Գյումրիի մի բնակչուհի ոստիկանության Մուշի բաժնում հաղորդում էր տվել, որ ապրիլի 28-ի ժամը 16-ից մինչեւ ապրիլի 29-ի գիշերը ինչ-որ մեկը կոտրել է Կոմերիտմիության փողոցում գտնվող իրենց տան ննջասենյակի պատուհանը եւ տնից հափշտակել փող: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ նաեւ արծաթյա զարդեր ու երկու բջջային հեռախոս էին հափշտակել:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ: Բացահայտման աշխատանքներին միացան ոստիկանության Շիրակի մարզային վարչության, Կումայրիի եւ Ախուրյանի բաժինների ծառայողները: Համագործակցությունը դրական արդյունք տվեց:

Տեղեկություններ ստացվեցին, որ գողությունը, ամենայն հավանականությամբ, կատարել է Գյումրիի Երեւանյան փողոցի մի բնակիչ: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Մուշի բաժին:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ նա մայիսի 1-ին Մոցարտի փողոցի մի տնից ոսկեղեն է հափշտակել, օրեր անց Ախուրյան գյուղի մի տնից՝ փող, ամիսներ առաջ Գյումրիի Նիզամու, Ժդանովի, Մյասնիկյան, Սպենդիարովի փողոցների տներից փորձել էր գողություն անել, բայց գործն ավարտին հասցնել չէր հաջողվել:

Հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Օպերատիվ

Հետախուզվում էր ապանության համար

Ապրիլի 15-ի գիշերը հիվանդանոցից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին հաղորդում էր ստացվել, որ հրազենային վնասվածքներով բուժօգնության են տեղափոխվել երկու երիտասարդ: Որպեսզի անց հնչեց եւս մեկ ահազանգ: Հիվանդանոցից հայտնում էին, որ բուժօգնության է տեղափոխվել մի երիտասարդ՝ հրազենային վնասվածքով: Հիվանդանոց տեղափոխվածներից 23-ամյա երիտասարդը, գիտակցության չգալով՝ մահացել էր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց, որ դեպքը տեղի է ունեցել Լեփսիուսի փողոցում: Նախնական տվյալներով՝ երիտասարդների ուղղությամբ կրակոցներ արձակել էր Լեփսիուսի փողոցի մի բնակիչ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում տեղեկությունները հիմնավորվեցին, եւ երիտասարդի նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Նրան օպերատիվ հայտնաբերելու նպատակով ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները կողմնորոշումներ ուղարկեցին տարածքային այլ ստորաբաժանումներ: Հետեւողական աշխատանքի արդյունքում ոստիկանության Սեւանի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ ստացան, որ հետախուզվողը թաքնվում է Սեւանա լճի հանգստյան գոտիներից մեկում: Տեղեկություններն իրացվեցին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր եւ Գեղարքունիքի մարզային վարչությունների ծառայողների հետ համատեղ: Մայիսի 23-ին հետախուզվողը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Սեւանի բաժին, ապա հանձնվեց հետախուզումը նախաձեռնած մարմնին:

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները համատեղ ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Գողություններ մեքենաներից

Այսօր, հատկապես մայրաքաղաքում, մեքենաների կայանման հարցը լուրջ խնդիր է: Որտե՞ղ կայանես, որ չխանգարես մյուսներին, որ չվնասեն, մեքենան գողության թիրախ չդառնա: Հարցեր, որոնք ավելանում են հանրապետություն ներկրվող տրանսպորտային միջոցների հոսքի հետ: Բոլորը չէ, որ ավտոտնակ ունեն: Մարդիկ մեքենան կանգնեցնում են բակում կամ փողոցում, հանգամանք, որից հանցավոր տարրերն օգտվում են:

Ապրիլին Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքի փողոցներում, բակերում կայանված մեքենաներից գողություններ էին կատարվել: Բնակիչները ոստիկանություն չէին դիմել: Հանցամիտն էլ անտարբերությունից ոգեւորված՝ շարունակել էր:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում տեղեկություններ ստացվեցին, որ Կարապետ Ուլնեցու փողոցի 40-ամյա մի բնակիչ գողություններ է անում: Տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո կասկածյալը բերման ենթարկվեց:

Պարզվեց, որ նա ապրիլի սկզբներին Ռուբինյանց փողոցի շենքերից մեկի բակում կայանված «ՎԱԶ-2121» մակնիշի մեքենայի մարտկոցն էր գողացել, շաբաթներ անց Գոգոլի եւ Մինաս Ավետիսյան փողոցներում կայանված «Մերսեդես»-ներից գողացել էր պահեստամասեր:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Գործընկերային»

Վարդենիսցի Արտավազդ Գեւորգյանը ատամնաբույժ էր Վարդենիկ գյուղի ատամնաբուժարանում, որը պատկանում էր ընկերոջը՝ մարտունեցի Գեղամ Սահակյանին: Գործընկերները աշխատանքային համերաշխ մթնոլորտում էին ծավալում իրենց գործունեությունը: Տարեսկզբին, սակայն, նրանց միջեւ տարաձայնություններ առաջացան: Արտավազդը նույն գյուղում տարածք վարձակալեց եւ սկսեց աշխատել առանձին:

Նախկին գործընկերների հարաբերություններն ավելի լարվեցին: Գեղամը Արտավազդին փող էր պարտք, ինչի վերադարձնելը ձգձգում էր: Այդ թեմայով երբեմն հեռախոսազրույց էին ունենում, սակայն «սայլը տեղից չէր շարժվում»:

Դերթական անգամ Արտավազդը զանգեց Գեղամին եւ պահանջեց վերադարձնել պարտքը: Գեղամը Արտավազդի խոսելաոճից զայրացավ եւ որոշեց հանդիպել ու դեմառդեմ հաշիվները պարզել:

Երբեմնի գործընկերների միջեւ պարտք ու պահանջի շուրջ ծավալված զրույցը վեճի վերածվեց, որի ընթացքում Գեղամը խփեց Արտավազդին:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Մարտունու բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ Արտավազդին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գողություն՝ հայտնի թախտայից

Վարդենիսցի Հովհաննես Մկրտչյանը եւ Վանեւան գյուղի բնակիչ Կարեն Վարդանյանը գործընկերներ էին: Հովհաննեսը հաճախ էր Կարենի մեքենան նստում, միասին փող գնում: Կարենը գործընկերոջը վստահում էր եւ նրա ներկայությամբ մեքենայի թաքստոցից փող էր վերցնում առօրյա ծախսերի համար: Այսինքն, Հովհաննեսը գիտեր գործընկերոջ մեքենայում պահվող փողի մասին:

Մարտի 4-ին Կարենը Վարդենիսի կենտրոնական հրապարակում կայանեց մեքենան ու մտավ խանութ: Մոտակայքում գտնվող Հովհաննեսը նկատելով, որ Կարենը մեքենայի դուռը չի փակել, որոշեց գողանալ թաքստոցի փողը: Մոտեցավ մեքենային ու 50 հազար դրամով հանդերձ հեռացավ:

Փողի բացակայությունը Կարենը նկատեց ժամեր անց եւ կատարվածի վերաբերյալ հաղորդում տվեց ոստիկանության Վարդենիսի բաժնում:

Իրավապահների ձեռնարկած միջոցառումների արդյունքում, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց Հովհաննես Մկրտչյանը եւ խոստովանական բացատրություն տվեց: Նրա արարքում առկա էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Եթե երեխան կորել է

Ի՞նչ անել, երբ երեխան կորել է: Միտքը, որ երեխան կարող է տնից փախչել, մոլորվել կամ նրան առեւանգեն, ցանկացած ծնողի խուճապի կմատնի, անգամ կհասցնի կաթվածի: Անհրաժեշտ է, որ ծնողները կարողանան իրենց ճիշտ պահել:

Մի պահ պատկերացրեք, որ ձեր երեխան կորել է: Ձեր արձագանքը՝ սթրես, հիսթերիա, սարսափ: Չգիտեք՝ ինչ անել, ուր գնալ, ում զանգել: Այնինչ կարեւոր է՝ երբեք չկորցնել հույսը եւ խուճապի չմատնվել: Գլխավոր նպատակն է՝ արագ եւ անվնաս գտնել երեխային:

Պետք է շտապ տեղեկություններ հավաքել երեխայի վերջին մեկ-երկու ժամվա գործողությունների մասին՝ մինչ կորչելը որտե՞ղ է եղել, ո՞ւմ հետ... Արագ կապ հաստատել բարեկամների, ընկերների, ծանոթների հետ, ովքեր կարող են որոշակի տեղեկություն հայտնել: Եթե երեխան մեկ ժամից ավելի է ուշացել, ապա անհրաժեշտ է շտապ սկսել որոնողական աշխատանքները: Մի կարեւոր հանգամանք. եթե որոնումների ընթացքում զանգում եք ծանոթ-բարեկամների, ապա՝ միայն բջջային հեռախոսով: Տան հեռախոսով հնարավոր է զանգի երեխան, կամ զանգեն հիվանդանոցից, ոստիկանությունից: Եթե մեկ-երկու ժամ անցել է, եւ երեխան չի վերադարձել, ինչ-որ մեկին թողեք տանը եւ գնացեք ոստիկանություն: Չմոռանաք վերցնել երեխայի նկարը: Ցանկալի է, որ այն լինի վերջին ժամանակների: Նկարի հետ պետք է լինի հայտարարություն: Եթե երեխան ունի ինչ-որ նշաններ, ցանկալի է, որ հայտարարության տեքստում նշվի:

Եթե կորցրել եք երեխային եւ գտել մի քանի ժամ անց, ապա աշխատեք չզայրանալ: Նա ձեզնից ավելի վախեցած է: Նախ երկուսով ուշքի եկեք, հանգստացեք, իսկ հետո պարզեք, թե ինչն էր պատճառը, ինչպես հետագայում խուսափել նման իրավիճակից:

Երեխայի առեւանգման դեպքում անհապաղ պետք է դիմել իրավապահ մարմիններին: Հավատացե՛ք, ոստիկանությունում կան փորձառու մասնագետներ, որոնք նման դեպքի առնչվել են, հստակ գիտեն իրենց գործառույթները եւ կարող են խելամիտ որոշել՝ ինչ անել:

Կարողացեք պահպանել հանգստություն. դժվար է, բայց դա բխում է հենց երեխայի շահերից: Խուճապի մի՛ մատնվեք, դա կվնասի ե՛ւ ձեզ, ե՛ւ ոստիկանության ձեռնարկած միջոցառումներին: Ձեր յուրաքանչյուր չմտածված քայլ կարող է ունենալ անկանխատեսելի հետեւանք:

Ցանկալի է, որ որոնողական աշխատանքներին, ոստիկաններից բացի, ներգրավվեն նաեւ կամավորներ, մարդիկ, որոնք մտահոգ են երեխայի ճակատագրով: Նման դեպքերում չի կարելի հրաժարվել օգնությունից: Աննշան օգնությունն անգամ այդ պահերին անգնահատելի է: Իհարկե, կամավորների աշխատանքը չի կարող փոխարինել հատուկ ծառայությունների աշխատանքին, բայց հնարավոր է՝ օգնի նախաքննական մարմնին: Ծավալուն աշխատանքի պատճառով ոստիկանությունը երբեմն չի կարողանում բավարար քանակով աշխատակից հատկացնել հսկայածավալ տարածքները ստուգելու համար: Օրինակ, կա հավանականություն, որ երեխան կորել է անտառում: Տարածքը մանրակրկիտ ստուգելու համար կամավորների մասնակցությունը ոչ միայն ցանկալի է, այլեւ անհրաժեշտ: Կամավորների մասնակցությունը մեկ այլ առավելություն նույնպես ունի՝ որքան շատ մարդ տեղյակ լինի, այնքան արագ գտնելու հավանականությունը կմեծանա:

Եթե ձեր երեխան կորել է, մի՛ հուսահատվեք. հիշեք, որ մենակ չեք, շրջապատում կան մարդիկ, որոնք անտարբեր չեն ուրիշի դժբախտության նկատմամբ, միշտ պատրաստ են անել անգամ անհնարինը՝ երեխային անվնաս գտնելու եւ տուն վերադարձնելու համար:

Ցանկացած ընտանիքի հետ կարող է պատահել նման դեպք՝ անկախ բարեկեցության աստիճանից: Խուճապի մի՛ մատնվեք, գործեք արագ ու կազմակերպված:

Իհարկե, ցանկալի է, որ երբեք նման իրավիճակում չհայտնվեք:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Վարձալի ամփոփագիր

Ջրափոսեր

Ոստիկանություն է զանգել 25-ամյա Դավիթը, թե՝ ինչ-որ անձ, ալկոհոլի ազդեցության տակ, դանակով հարձակվել է իր վրա, այդ պահին էլ նստած է շքամուտքում:

Մեկնած ոստիկաններին Դավիթը հաղորդում է տվել, որ 53-ամյա հարեւանը, իրենց շենքի հետնամասում ջրափոսերի մեջ ավազ լցնելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ անհիմն վիճաբանել է իր հետ, դանակով սպառնացել է, թե կսպանի:

Հարեւանը բերման է ենթարկվել:

Էլեկտրական շաղափ

Գողություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել 52-ամյա մի տղամարդ: Խուզարկությամբ նրա ձեռքին եղած պոլիէթիլենային տոպրակի մեջ հայտնաբերվել է էլեկտրական շաղափ, այլ կերպ ասած՝ դռել:

Տղամարդը հայտնել է, որ դա գողացել է իր ծանոթ Ջավենի տնակից՝ հետագայում վաճառելու եւ իր կարիքները հոգալու նպատակով:

Ձեռնարկվում են միջոցառումներ տուժողի անձը պարզելու ուղղությամբ:

Օղի, կռիվ, ընտանիք...

Ոստիկանություն է զանգել ՌԴ քաղաքացի մի կին եւ հայտնել, որ ՌԴ քաղաքացի ամուսինն իրեն ծեծել է:

Մեկնած ոստիկաններին կինը հայտնել է, որ վիճաբանության ժամանակ ամուսինը, ոգելից խմիչք օգտագործած վիճակում, ձեռքով խփել է իր գլխին՝ պատճառելով ֆիզիկական ցավ, հետո ձեռքերով փորձել է խեղդել, ինքը մի կերպ դուրս է եկել տնից:

Ստուգվել է ամուսնու, հանգամանքների բերումով՝ նաեւ կնոջ խմածության աստիճանը: Երկու դեպքում էլ պատասխանը դրական էր:

Սերունդների բախում

60-ամյա մի կին հաղորդում է տվել, որ իրենց շենքի բակում հարեւանուհու թոռնուհի Լիանան, հեռախոսով նկարելու շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, բահով խփել է իր գլխին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Ձեռնարկվում են միջոցառումներ հեռախոսն ու բահը հայտնաբերելու ուղղությամբ:

Սանրով եւ հողաթափով

Գիշերը ոստիկանություն է զանգել 18-ամյա մի աղջիկ եւ խնդրել, որ ոստիկան մոտենա:

Մոտեցել է: Պարզվել է, որ գիշերվա երեքին տանը, վիճաբանության ժամանակ, աղջիկը սանրը նետել է մոր ուղղությամբ, եւ այն դիպել է մոր դեմքին՝ պատճառելով վնասվածք, իսկ մայրն էլ իր հերթին հողաթափն է նետել է դստեր վրա: Մայրը, կարելի է ասել՝ վրիպել է. հողաթափը դիպել է դստեր թեւին:

Երկուսն էլ հրաժարվել են հաղորդում տալուց:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ մայիսի 23-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 38 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության փորձի եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 3-ը՝ ծեծի, 1-ը՝ ծեծի եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 5-ը՝ գողության, 1-ը՝ գողությանը հանցակցելու եւ ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու կամ իրացնելու, 6-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու,1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ դասալքության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող:

Արձանագրվել է 92 ճանապարհատրանսպորտային պատահար. 6 մարդ զոհվել է, 114-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 18 դեպք. 2 մարդ զոհվել է, 17-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Մայիսի 26-ին Երեւանի Ֆուչիկի փողոցում իրար են բախվել «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 65-ամյա վարորդը եւ «Մերսեդես»-ի 3-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 26-ին Երեւանի Արցախի փողոցում «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 55-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 27-ին Երեւանի Հասրաթյան փողոցում «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 11-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 27-ին Երեւանի Ֆուչիկի փողոցում «Շեվրոլե» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 10-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 27-ին Սյունիքի մարզի Կապան քաղաքում «Մազդա Դեմո» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 10-ամյա աղջկա եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Մայիսի 27-ին Արարատի մարզի Դիտակ գյուղի ճանապարհին «ՎԱԶ-21213» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «ԳԱԶ-53-12» բեռնատարի հետնամասին. «ՎԱԶ-21213»-ի վարորդը եւ 55-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, իսկ ուղեւորներից մեկը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

■

Մայիսի 28-ին Երեւանի Աբելյան փողոցում «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 33-ամյա եւ 10-ամյա քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Երեւանի Շոպրոնի փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բախվել է «ԲՄՎ» եւ կայանված «Օպել» մակնիշի ավտոմեքենաների. «Մերսեդես»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Երեւանյան եւ 19-րդ փողոցների խաչմերուկում իրար են բախվել երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. 64-ամյա վարորդներից մեկը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Արարատի մարզի Այգեստան գյուղում իրար են բախվել «ՎԱԶ-21011» եւ «ՎԱԶ-21061» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «ՎԱԶ-21011»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Երեւան-Երասխ ճանապարհի 35-րդ կմ-ին «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ շրջվել. 35-ամյա վարորդը եւ 57-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Կոտայքի մարզի Գառնի գյուղում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «ԲՄՎ»-ի վարորդը վրաերթի է ենթարկել մայթին կանգնած 59-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Գյումրի քաղաքի Հաղթանակի եւ Սպանդարյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» մակնիշի ավտոմեքենա եւ «ԲՄՎ» մոտոցիկլետ. մոտոցիկլետի 29-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 28-ին Երեւան-Սեւան ճանապարհի 19-րդ կմ-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ հարվածել ճամփեզրի ծառին. 26-ամյա վարորդը տեղում մահացել է:

Հայկական միլիցիայի կազմավորման պատմությունից

Սկիզբը՝ նախորդ համարում

1917 թ. հուլիսի 7-ին Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ռազմական եւ ծովային կոմիսար Դոնսկոյի նախագահությամբ տեղի ունեցավ Անդրկովկասյան բանվորական, գյուղացիական եւ զինվորական կենտրոնների համատեղ նիստ: Օրակարգի 3-րդ հարցը «Ժանդարմերիայի եւ միլիցիայի կազմութեան մասին» էր: Որոշվեց ծառայությունից ազատել իրավապահ մարմնի բոլոր աշխատակիցներին, աստիճանազրկել եւ որպես շարքային ուղարկել գործող բանակ: Դատուկ որոշմամբ սահմանվում էր՝ «Ժանդարմերիայում ծառայող բոլոր մահմեդական ոստիկաններին Կովկասի սահմաններից դուրս վռնդել»:



Ոստիկանության լուծարումը հանգեցնում է զանգվածային անկարգությունների: Նորաստեղծ եւ մասնագիտական փորձ չունեցող միլիցիան ի զորու չէր լիարժեք պայքարել հանցավորության դեմ: Այնուամենայնիվ, գրանցվում են դեպքեր, երբ միլիցիայի աշխատակիցները կարողանում են հակահարված տալ ավազակներին, գլխավորապես՝ քրդերին:

Միլիցիայի կազմակերպումը պահանջում էր տեւական ժամանակ, մի շարք դեպքերում աշխատակիցները ռոճիկ չէին ստացել: Բացի այդ, նորանշանակ աշխատակիցները չունեին ո՛չ մասնագիտական, ո՛չ գործնական աշխատանքի փորձ, ինչի հետեւանքով հնարավոր չէր արդյունավետ օպերատիվ-հետախուզական աշխատանքներ իրականացնել: Դանցագործներն այն աստիճանի էին լկտիացել, որ հարձակվել էին Ներքին Ախտայի (այժմ՝ Դրազդան) բանտի վրա: Մասնագիտական որակավորում չունեցող եւ անփորձ միլիցիոներները չէին կարողանում կատարել պարտականությունները, ուստի Ղարաբաղի գործադիր կոմիտեն առաջարկում է Շուշիի քաղաքային վարչությանը քննարկել նախկին տասներկու ոստիկաններին ծառայության ընդունելու խնդիրը:

Դայաստանի այն հատվածներում, որտեղ կար հնարավորություն, կազմակերպվում է միլիցիա: 1917 թ. մայիսի 1-ին Վանում կազմակերպվում է միլիցիա, որի պետն էր Լեւոն Շաղոյանը, իսկ օգնականը՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանը: Սկզբում միլիցիոներների թիվը հիսուն էր, իսկ դեկտեմբերին հասավ երկու հարյուրի:

Ռուսական զորքի հեռանալուց հետո, 1918 թ. հունվարի 18-ին ստեղծվում է Վանի հայկական իշխանությունը՝ Կոստանդին Դամբարձումյանի գլխավորությամբ: Կազմակերպվում է նաեւ Ներքին գործերի տեսչություն եւ 200 հոգուց կազմված ոստիկանություն:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվում է Դայաստանի Դանրապետությունը, որը սոցիալ-տնտեսական ծանր վիճակում էր: Թուրքական արշավանքը, Բաթումի պայմանագիրը ծանր դրության մեջ են դնում նորանկախ հանրապետությանը, քանի որ, բացի տարածքներից, կրճատվում է նաեւ զինված ուժերը:

1918 թ. սեպտեմբերի 16-ին ՆԳ նախարար Արամ Մանուկյանը կառավարության նիստին ներկայացնում է «Միլիցիայի մասին օրենք»-ի նախագիծ, ինչին հավանություն է տրվում: Սեպտեմբերի 17-ի նիստին ՆԳ նախարարը ներկայացնում է գավառական միլիցիայի աշխատակիցների հաստիքների մասին նախագիծը, ինչը հավանության է արժանանում եւ ներկայացվում խորհրդարանի հաստատմանը:

Դիմնախնդիրը լուծելու հնարավորություն է ստեղծվում միայն 1919 թ., երբ պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը սկսում է զորքերը դուրս բերել Դայաստանից: Դաշվի առնելով հատկապես Երեւանում ստեղծված քրեական իրավիճակը՝ ՆԳ նախարար Ալեքսանդր Խատիսյանի հրամանով Աշոտ Շահխաթունին նշանակվում է Երեւան քաղաքի պետ: Նրա ենթակայության տակ են անցնում քաղաքային ու երկաթուղային միլիցիան: Շահխաթունուն իրավունք է տրվում Երեւանում իրավակարգի պաշտպանությունը ապահովելուց բացի, իրավախախտներին մինչեւ երկու ամսով կալանավորել կամ 3000 ռուբլի տուգանել: Զինվորական նախարարության հետ կապված հարցերում քաղաքի պետն անմիջականորեն ենթարկվելու էր զինվորական նախարարի օգնական Դրոյին (Դրաստամատ Կանայան):

Շարունակելի

Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
Ռոստոմ ՍԱՐԳՍՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու,
ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
պրոֆեսոր, ոստիկանության գնդապետ

Վամերիկայի մոլագարները

Սկիզբը՝ նախորդ համարում

Մինչեւ 1991 թ. հուլիսի 15-ը Ջեֆրի Դամերը սպանեց 17-ից 32 տարեկան եւս յոթ երիտասարդի: Նրանցից չորսի գանգերը վերցրեց որպես «հուշանվեր», իսկ երեքի գլուխները պահեց սառնարանում: Բացի այդ, թթվուտով տակառում պահում էր տարբեր մարմնամասեր, ապակե ամանում՝ սեռական օրգաններ ու ձեռքի թաթեր, իսկ խոհանոցի պահարանում զոհերի գանգերն ու մատներն էին: Մարդու մսից իր համար համբուրգերներ էր պատրաստում: Եվ դեռ քանիսին կսպաներ ու կուտեր, եթե վրա չհասներ անսպասելի հանգուցալուծումը:

Այդ օրը Դամերը Միլուոկիի տոնավաճառում ծանոթացավ հերթական զոհի՝ Թրեյսի Էդվարդսի հետ: Էդվարդսը չկասկածեց, որ հմայիչ Դամերը դաժան մարդասպան է ու հաճույքով ընդունեց նրա բնակարանում մի գավաթ գարեջուր խմելու առաջարկը: Նոր էին տուն մտել, երբ Դամերը ձեռնաշղթա հագցրեց Էդվարդսի դաստակներին, նրան գցեց մահճակալին, ականջը հպեց կրծքին ու ասաց. «Ինչպե՞ս է խփում: Դու երեւի երբեք կենդանի մարդկային սիրտ չես տեսել: Գիտե՞ս ինչ հրաշալի տեսարան է»:

Դրանից հետո Դամերը փակեց աչքերն ու քթի տակ ինչ-որ մեղեդի մռմռալով՝ սկսեց կամաց օրորվել: Էդվարդսը փշաքաղվեց: Նոր էր գիտակցում՝ ում կացարանն է ընկել: Մոտալուտ վախճանի գիտակցությունն ուժ տվեց նրան, թափ առավ ու խփեց մահճակալի եզրին նստած Դամերի ծնոտին: Հարվածն այնքան ուժգին ու անսպասելի էր, որ Դամերը փռվեց գետնին ու գլուխը հատակին խփելով՝ կորցրեց գիտակցությունը: Այդ վայրկյանները բավական էին, որպեսզի Էդվարդսը դուրս նետվեր անիծյալ տնից:

Էդվարդսի բախտից՝ մոլագարը ուշ ուշքի եկավ, եւ սուրալով փողոց՝ նկատեց պարեկային մեքենան ու գլխապատառ նետվեց ոստիկանների մոտ:

Գիշերը ոստիկանները թակեցին Դամերի տան դուռը: Տանտերը զարմանալիորեն հանգիստ ընդունեց անսպասելի հյուրերին: Հավանաբար հույս ուներ, որ այս անգամ էլ դուրս կպրծնի, սակայն հաջողակությունը դավաճանեց նրան:

Ոստիկանները կապվեցին վարչության գործընկերների հետ ու տվյալներ խնդրեցին 31-ամյա Դամերի մասին: Պատասխանեցին, որ նրան 1982 թվականին կալանավորել են 13-ամյա անչափահասի բռնաբարության փորձի համար, իսկ 1989-ին նմանատիպ հանցագործության համար տասը ամիս բանտ է նստել: Այդ տեղեկությունները ստանալով՝ պարեկող ոստիկաններն անցան բնակարանի զննմանը: Նրանցից մեկը բացեց սառնարանն ու մի քանի մարդու կտրված գլուխ տեսավ...

Այս գործով քննությունը համարյա մի տարի տեւեց: Չնայած Ջեֆրի Դամերը այդպես էլ չընդունեց տասնհինգ մարդու սպանության մեղադրանքը՝ հավաքված հանցանշանները բավարար էին, եւ գործն ուղարկվեց դատարան: Դատավարությունը տեղի ունեցավ 1992 թվականին ու հայտնվեց միլիոնավոր ամերիկացիների ուշադրության կենտրոնում: Դատավարությանը հանդես եկավ հոգեբույժը, որը տեւական ժամանակ հետազոտել էր Դամերին: Ըստ բժշկի վարկածի՝ Դամերն իր հյուրերին սպանում էր, որովհետեւ չէր ցանկանում բաժանվել նրանցից: Նա զոհին քնաբեր էր տալիս, ապա գլխին, որտեղ կամքի կենտրոնն էր, անցք էր բացում եւ աղաթթու լցնում՝ նրան զոմբիացնելու համար: Բայց Դամերի հյուրերը մահանում էին, ու նա այլ ելք չէր գտնում, քան սիրեկանների գլուխներն ի հուշ պահելն ու նրանց միսն ուտելը:

Ի վերջո, Ջեֆրի Դամերն իրեն մեղավոր ճանաչեց տասնհինգ մարդու սպանելու մեջ ու վերջին խոսքում հայտարարեց. «Ես պահանջում եմ, որ ինձ մահվան դատապարտեք: Հույսս Աստծո ողորմածությանն է: Հասկանում եմ, որ հասարակությունն ու իմ զոհերի հարազատները երբեք ինձ չեն ների: Խոստանում եմ կյանքիս մնացած օրերին աղոթել՝ քավության արժանանալու համար: Ես տեսել եմ այդ դժբախտ մարդկանց արցունքները ու եթե կարողանայի՝ կյանքս կտայի՝ նրանց հարազատներին վերադարձնելու համար: Իմ մեջ ատելություն չի եղել որեւէ մեկի հանդեպ: Հասկանում եմ, որ խելագար ու մոլագար էի, բայց հիմա հոգիս խաղաղվեց: Եվ միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսը կկարողանա ներել իմ մեղքերը...»:

Շարունակելի

Հանցանք եւ պատիժ

Սարո Ավետիսյանը 2010 թվականի հունվարի 26-ին դաժանաբար ծեծել էր հոր մանկության ընկերոջը՝ Դավիկ Գեւորգյանին: Դետո տեսնելով, որ նա ի վիճակի չէ ոտքի կանգնելու, տաքսիով ուղարկել էր տուն:

Միջադեպի մասին ոստիկանությունում ահազանգ չէր եղել, տուժողը չէր ցանկացել, որովհետեւ ծեծվելու պատճառահետեւանքային կապերը հասնում էին քսանամյա վաղեմություն:

Իսկ վնասվածքները կյանքի հետ անհամատեղելի էին, եւ օրեր անց հիվանդանոց տեղափոխված Գեւորգ Դակոբյանը մահացավ:

1991 թվականին Գեւորգ Հակոբյանն ընկերոջ որդուց՝ Սարո Ավետիսյանից փոխառությամբ երեք հազար հինգ հարյուր դոլար եւ ոսկյա զարդեր վերցրեց՝ մի քանի օրից վերադարձնելու պայմանով:

Ֆինանսական բարվոք վիճակում գտնվող Սարո Ավետիսյանն այն ժամանակ «տոկոսով» փող էր տալիս ու եկամուտ ստանում, բայց ընտանիքի մտերիմ Գեւորգ Հակոբյանից ոչ թե եկամուտ ստացավ, այլ խաբվեց. «էսօր-էգուց» անելով՝ Գեւորգ Հակոբյանը խուսափում էր պարտքը վերադարձնել:

1996 թվականին Սարո Ավետիսյանը Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում շորթում կատարեց եւ կալանավորվեց: Գեւորգ Հակոբյանը մտերիմ ընտանիքից փող պոկելու նոր ձեւ գտավ: Սարգսի հորը՝ Ալբերտ Հակոբյանին իր «օգնությունն» առաջարկեց՝ իբր երեք հազար հինգ հարյուր դոլարով կարող էր քրեական պատասխանատվությունից ազատել Սարոյին: Որդուն կալանքից ազատելը հոր մեծագույն ցանկությունն էր, եւ նա, պահանջված փողով, Գեւորգ Հակոբյանի հետ մեկնեց Մինսկ՝ որդու գործը «դասավորելու»: Բայց գործն այլ կերպ դասավորվեց՝ հյուրանոցում Գեւորգ Հակոբյանը գողացավ երեք հազար դոլարն ու անհետացավ...

Նախկինում երկու անգամ դատված ընկերոջից խաբված ու հիասթափված Ալբերտ Ավետիսյանին այլ բան չէր մնում, քան վերադառնալ Երեւան:

Իրենից խույս տվող Գեւորգ Հակոբյանին հանդիպեց պատահաբար՝ երեք-չորս ամիս անց: Ամոթանք տվեց ու պահանջեց գողացած փողը: Գեւորգ Հակոբյանը հազար դոլարը վերադարձնելով՝ խոստացավ մաս-մաս տալ նաեւ երկու հազարը: Բայց այդ օրվանից նորից անհետացավ՝ ընկերոջը վերստին թողնելով հիասթափված ու խաբված:

2010 թվականին Սարո Ավետիսյանը կալանավայրից ազատվեց, վերադարձավ Հայաստան եւ իմացավ, որ Գեւորգ Հակոբյանը խաբել էր նաեւ հորը: Ծանոթներից իմացավ, որ նա բացակայում է հանրապետությունից: Նաեւ խնդրեց՝ հայտնվելու դեպքում իրեն իմաց տալ:

Գեւորգ Հակոբյանը Հայաստան վերադարձավ դեկտեմբերին, իսկ օրեր անց Սարոն իմացավ այդ մասին ու հաշվեհարդարի վճիռն ավելի կոնկրետացավ:

Գեւորգ Հակոբյանը գիտեր, որ Սարոն իրեն է փնտրում, ու շատ զգուշավոր էր դարձել, տնից հազվադեպ էր դուրս գալիս, այն էլ՝ կարճ ժամանակով: Տնեցիներին էլ զգուշացրել էր՝ դուռը չբացել, մինչեւ ինքը դիտանցքից չճշտի զանգ տվողի ով լինելը: Մի խոսքով, ահը սրտում ապրում էր, մինչեւ որ հունվարի 26-ին հանդիպեց Սարոյին:

Պարտք ու պահանջի շուրջ վեճը երկար չտեւեց. Սարոն անցավ հարձակման ու դաժանորեն ծեծեց Գեւորգ Հակոբյանին:

«Գանգուղեղային եւ կրծքավանդակի փակ վնասվածքներ, բարակ աղու պատռվածք, կողերի եւ քթոսկրի կոտրվածք, օջախային արնազեղումներ, սալջարդ վերքեր...»՝ սա մեջբերում է դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունից: Եզրակացության մեջ նաեւ նշվում էր՝ կենդանության օրոք ստացած վնասվածքները մահվան պատճառի հետ պատճառական կապի մեջ են եւ հանգեցրել են մահվան:

Գեւորգ Հակոբյանը տնեցիներից թաքցրեց վնասվածքների պատճառը, ասաց՝ իբր փոսն է ընկել եւ հրաժարվեց հիվանդանոց գնալ: Նրան հիվանդանոց տեղափոխեցին երեք օր անց, երբ պատռված աղին մահացու գործն արել էր...

Իմանալով, որ Գեւորգ Հակոբյանը մահացել է, Սարո Ավետիսյանն արագ լուծեց անձնագրի վավերականության հարցն ու մեկնեց Վրաստան, այնտեղից էլ՝ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի մարզ: Փախավ քրեական պատասխանատվությունից:

Միջազգային հետախուզման մեջ գտնվող Սարո Ավետիսյանը հայտնաբերվեց ութ տարի անց: Եկել էր կատարած հանցանքի համար պատասխան տալու ժամանակը:

Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողության փորձը բացահայտվեց

Անցած տարի, դեկտեմբերի 10-ին, անհայտ անձինք պոկել էին Նուբարաշենի 9-րդ փողոցի տներից մեկի ճաղավանդակը, փորձել մտնել տուն եւ գողություն անել, սակայն նկատելով հարեւանին՝ փախել էին:

Գողության փորձի հատկանիշներով հարուցվեց քրեական գործ:

Իրավապահները զրուցեցին ականատես հարեւանի հետ, իրականացրին տարաբնույթ միջոցառումներ, որոնք, սակայն, արդյունք չտվեցին:

Դեպքից չորս ամիս անց ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Էրեբունու բաժնի եւ Նուբարաշենի բաժանմունքի ծառայողների հետեւողական միջոցառումների շնորհիվ, գողության փորձ կատարելու կասկածանքով, ոստիկանություն բերման ենթարկվեց 26-ամյա Վանիկ Կիրակոսյանը: Նա խոստովանեց կատարածը:

Ոստիկանները տեղեկություններ ունեին, որ մենակ չէր գործել: Պարզվեց նաեւ հանցընկերոջ ինքնությունը՝ 29-ամյա Սարգիս Մանուկյան, որը բացատրական աշխատանքի շնորհիվ ներկայացավ ոստիկանություն:

Վանիկ Կիրակոսյանը ոստիկաններին խոստովանեց նաեւ, որ բացի նշված գողության փորձից, Նոր Նորքում երկու խանութից եւս գողություն է արել:

Հարուցված քրեական գործի քննությունը շարունակվում է:

Հանցընկերները հայտնաբերվեցին

Ոստիկանության Էրեբունու բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ ոմն Օնիկ ու Էդմոնդ գողություններ են անում:

Ճշտվեց նրանց ինքնությունը՝ Օնիկ Հարոյան եւ Էդմոնդ Հակոբյան: Նրանք, գողություններ կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեցին ոստիկանության Էրեբունու բաժին:

Պարզվեց, որ ապրիլի 24-ին մտել էին Տիտոգրադյան փողոցի գարեջրատներից մեկն ու գողություն արել: Նույն գարեջրատնից գողություն էին արել նաեւ ապրիլի 26-ին:

Ապրիլի 25-ին նույն փողոցի մի խանութից գողացել են տարբեր իրեր: Ապրիլի 29-ին փորձել էին գողություն անել Ավանեսովի փողոցի հացի փռից, սակայն չկարողանալով բացել դուռը՝ հեռացել էին:

Մայիսի 4-ին նույն հացի փռից գողացել էին տարբեր իրեր: Մայիսի 6-ին ցանկացել են գողություն անել Խաղաղ Դոնի փողոցի հացի փռից, սակայն չկարողանալով դուռը բացել՝ հեռացել էին:

Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքերի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հարուցված քրեական գործով քննություն է կատարվում

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գողության փորձ

Մայիսի 16-ին ոստիկանության Իջեւանի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Երեւանյան փողոցի սուպերմարկետը թալանել էին: Ներս էին մտել հետնամասի երկրորդ հարկի պատուհանից: Բացի գողությունից, վնասել էին նաեւ դրամարկղը: Պատճառվել էր 1 միլիոն 200 հազար դրամի վնաս:

Դեպքի առթիվ ոստիկանությունում քրեական գործ հարուցվեց գողության եւ գույքի դիտավորյալ ոչնչացման կամ վնասման հատկանիշներով:

Իջեւանի քրեական հետախույզները, տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկելով, պարզեցին սուպերմարկետ մտած անձի ինքնությունը, որին հայտնաբերելու միջոցառումներին զուգահեռ բացատրական աշխատանք իրականացրին, ինչն արդյունք տվեց:

Նախկինում գողությունների մեղադրանքով դատապարտված 30-ամյա իջեւանցին կամավոր ներկայացավ ոստիկանության Իջեւանի բաժին:

Հարուցված քրեական գործն ու կասկածյալը ներկայացվել են տարածքային քննչական բաժին, որտեղ նրան մեղադրանք է առաջադրվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բռնության գործադրում

Կան մասնագիտություններ, օրինակ՝ առողջապահական, սպասարկման ոլորտները, որոնք ռիսկի խմբում են: Ճիշտ է, հիմա ամենուր տեսահսկման խցիկներ կան, իսկ բուժհաստատություններում՝ նաեւ անվտանգության աշխատակիցներ, բայց դա չի նշանակում, որ այդ ոլորտների աշխատակիցները ապահովագրված են բռնարարքների գործողություններից: Բռնարարը երբեմն իմպուլսիվ է գործում՝ հաշվի չառնելով հետեւանքները:

Իմպուլսիվ էր գործել նաեւ վանաձորցի փողամարդը. նրան հունից հանողը կին էր, որի դեմքին ու գլխին բար-սրճարանում խփել էր ձեռքերով ու գարեջրի դատարկ շշով: Կինը ստացել էր ծանր մարմնական վնասվածք ու տեղափոխվել հիվանդանոց:

Նման վարքագիծ դրսեւորելու համար, անկասկած, եղել է նախապատմություն, բայց պատճառը որքան էլ ծանրակշիռ լիներ, փողամարդու արարքն արդարացում չուներ, ու միանգամայն օրինաչափ է, որ նրա արարքի հետագա քննությամբ կզբաղվեն քննչական, ապա եւ դատական մարմինները:

Իմպուլսիվ էին գործել նաեւ երեւանաբնակ մայր ու դուստր, որոնք ագրեսիվ տրամադրվածությամբ մտել էին Երեւանի բժշկական կենտրոններից մեկի վերակենդանացման բաժանմունք, որտեղ բուժօգնություն էր ստանում նրանց հարազատը: Ինչ-որ բանից զայրացած՝ գնացել էին բուժանձնակազմին վիրավորելու: Ոտքով խփել ու վնասել էին բաժանմունքի մուտքի դուռը, հայհոյել բուժաշխատողներին ու անվտանգության ծառայողին:

Այս դեպքում եւս քրեական գործ է հարուցվել:

Ռիպսա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Դաժանությամբ ինքնահաստատվողը

Ամուսինը դանակահարել էր կնոջը: Կինը հարեւանների օգնությամբ տեղափոխվել էր հիվանդանոց, իսկ ամուսինը փախել էր...

Դեպքը կատարվել էր չորս տարի առաջ՝ մայրաքաղաքի Սեւանի փողոցի տներից մեկում: Չորս տարի Ալեքսան Հակոբյանը խույս էր տվել քրեական պատասխանատվությունից: Հասցրել էր հատել հանրապետության սահմանը եւ տաքուկ անկյուն գտնել Վրաստանում բնակվող բարեկամների մոտ: Չորս տարի անց, վստահ, որ իրեն այլեւս չեն հիշում ու չեն փնտրում, վերադարձավ Հայաստան:

Ալեքսան Հակոբյանին իրավապահները չէին մոռացել, նրան հայտնաբերելու ուղղությամբ հետախուզում էր հայտարարվել, ու երբ հայտնվեց Բագրատաշենի սահմանային անցակետում, «դիմավորեցին» ոստիկանները...

Դաժանությամբ ինքնադրսեւորվելու նախասիրություն ունեցող Ալեքսան Հակոբյանը հիսունյոթ տարեկան է: «Հախուռն» կյանքի հետեւանքներն էլ նախկինում երեք դատվածություններն են:

Կնոջ՝ Անահիտ Սերոբյանի հետ համատեղ ամուսնական կյանքում երկու որդի ունեցան, որոնք հորից «տղամարդ» դառնալու անհաջող դասեր էին առնում. հոր խոսքը բռունցքն էր, հայհոյանքը... Անհաշտությունը, մշտական վեճերն ու անախորժություններն, ի վերջո, ամփոփվեցին ամուսնալուծությամբ:

Նախկին ամուսինները, սակայն, շարունակեցին ապրել նույն տանը: Ուզեին-չուզեին՝ ամեն օր հանդիպելու էին, բայց վատ հարեւանների պես թունոտ ակնարկներ ու հայացքներ էին նետելու իրար՝ «հիշելով» հին ժամանակները...

Բայց մի օր նրանց «հարաբերվելն» այդքանով չսահմանափակվեց:

Նախկին դարձած կինն այլեւս նախկինի պես վիրավորանքները կուլ տվող չէր, մինչդեռ Ալեքսան Հակոբյանը նախկին հովերով էր տարված ու որոշեց «լեզվին տվող» կնոջը ցույց տալ իր «տղամարդկային» ուժը: Ցույց տվեց նախ բռունցքով, հետո՝ դանակով, երեխաների աչքի առաջ:

Բարեբախտաբար, կնոջ ու երեխաների լացի ձայնից դուրս եկած հարեւանները խանգարեցին, որ Ալեքսանի ինքնադրսեւորվելը ողբերգական ավարտ ունենար:

Հարեւաններին տեսնելով՝ Ալեքսանը փախավ:

Նրան հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված որոնողական միջոցառումներն ապարդյուն անցան. հասցրել էր հեռանալ երկրից:

Առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելու մեղադրանքով հարուցված քրեական գործը կասեցվեց հանցագործություն կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով:

Դեպքից չորս տարի անց քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բացահայտում են Նոր Նորքի ոստիկանները

Անցած տարվա հունիսի 24-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում հանցագործության մասին հաղորդում ստացվեց: Քաղաքացին հայտնում էր, որ իր հարազատին պատկանող եւ իրեն վստահված Գյուրջյան փողոցի առանձնատնից փորձել են գողություն անել:

Անհայտ անձը կամ անձինք անցել էին պարսպով, կոտրել մուտքի դռան ապակին, փորձել էին նաեւ լինգով բացել դուռը, բայց չէր հաջողվել ու ոչինչ չգողանալով՝ հեռացել էին:

Հարուցվել էր քրեական գործ:

Նոր Նորքի ոստիկանները ձեռնարկել էին տարաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունը կատարած անձին կամ անձանց հայտնաբերելու համար: Թեեւ Նոր Նորքի քրեական հետախույզները բացահայտել էին բազմաթիվ հանցագործություններ, այդ թվում՝ բնակարանային գողություններ, սակայն Գյուրջյան փողոցում կատարվածը մնում էր չբացված:

Դեպքից գրեթե մեկ տարի անց Նոր Նորքի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ստացվեցին բացահայտման համար անհրաժեշտ օպերատիվ տեղեկություններ, որոնց հետեւողական ուսումնասիրման արդյունքում փաստ դարձավ, որ չբացահայտվող հանցագործություն եւ անպատժելիություն եզրույթներն, առնվազն նկարագրված դեպքի հետ, անհամատեղելի են:

Օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Գյուրջյան փողոցի առանձնատնից գողության փորձը հնարավոր է կատարած լիներ Մառի փողոցի 17-ամյա քաղաքացին: Մայիսի 16-ին նա հայտնաբերվեց եւ կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին, որտեղ խոստովանական բացատրություն տվեց:

Քրեական հետախույզները հիմնավոր կասկածներ ունեին, որ անչափահասը կատարել է նմանատիպ այլ արարքներ եւս: Բացատրական աշխատանքների արդյունքում նա խոստովանեց, որ Նոր Նորք վարչական շրջանում եւ Արագածոտնի մարզի Օշական գյուղում կատարել է մի քանի բնակարանային գողություն եւ գողության փորձեր: 2018 թվականի աշնանը փորձել էր գողություն անել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի հետնամասում գտնվող տնից: Նույն ժամանակահատվածում մտել էր բժշկական կենտրոնի դիահերձարանին հարակից տնակն ու գողացել տեսասարք, շախմատ եւ այլ իրեր: Հետքերը ոչնչացնելու նպատակով տնակը հրկիզել էր: Բաց պատուհանից մտել էր Նոր Նորքից Նորք-Մարաշ տանող Ձանապարհի տներից մեկը եւ գողացել խմիչք: 2017 թվականին երկու անգամ փորձել էր գողություն անել Նոր Նորք վարչական շրջանի առանձնատներից: 2018 թվականին Օշական համայնքում եւս երկու առանձնատուն էր մտել: Գողացել էր բջջային հեռախոս, խմիչք ու փող:

Հարուցված քրեական գործով քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Անցյալի ուրվականը

2012 թվականի մայիսին Դիլիջան քաղաքի բնակիչ Երվանդ Սարգսյանը բաց պատուհանից մտել էր Անդրանիկի փողոցի տներից մեկը եւ փորձել հափշտակել հեռուստացույց, նվագարկիչ, հեռախոսի լիցքավորման լար եւ ապակյա տարաներ: Բեռնավորված դուրս էր եկել, սակայն տանտիրոջ անսպասելի վերադարձի պատճառով հանցագործությունը ավարտին չէր հասցրել եւ դիմել էր փախուստի:

Դեպքի առթիվ քրեական գործ էր հարուցվել, Երվանդ Սարգսյանը հայտնաբերվել եւ բերման էր ենթարկվել ոստիկանություն: Խափանման միջոց էր ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Մինչ նախաքննական մարմինն իր գործ էր անում, Երվանդ Սարգսյանն անցել էր ի՛ր գործին: Կոտրելով Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոցի մի տան լոգարանի պատուհանը՝ մտել էր եւ հափշտակել մեկ միլիոն դրամ արժողության կենցաղային իրեր եւ հագուստ:

Ոստիկանության Դիլիջանի բաժնի քրեական հետախույզները այս հանցագործությունը եւս բացահայտեցին, բայց այս անգամ Երվանդ Սարգսյանին հայտնաբերել չհաջողվեց: Կարողացել էր հատել սահմանը, ապա մեկնել Ռուսաստան:

Ռուս գործընկերների հետ համագործակցության արդյունքում Երվանդ Սարգսյանը հայտնաբերվեց Մոսկվայի մարզում եւ ՔՀԳՎ օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան:

Յոթ տարի առաջ հարուցված քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Հ. Պ.

Թմրամիջոց՝ խուզարկությամբ

Մայիսի 17-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության եւ Էրեբունու բաժնի ծառայողները, համագործակցելով «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ծառայողների հետ, քրեակատարողական հիմնարկի մոտից ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկեցին Կոտայքի մարզի բնակիչ Աշոտ Անանյանին:

Ոստիկանությունում Աշոտ Անանյանը ներկայացրեց սպիտակ փոշենման զանգվածով փաթեթ:

Պարզվեց՝ փաթեթը փվել էր ոմն Ռոբերտ՝ դատապարտյալներից մեկին փոխանցելու համար: Ճշտվեց Ռոբերտի ինքնությունը՝ երեւանցի Ռոբերտ Գեւորգյանը նույն օրը կասկածանքով բերման ենթարկվեց:

Ըստ փորձաքննության եզրակացության՝ փաթեթում 1,83 գրամ մեթադոն էր:

Քրեական գործն ուղարկվել է նախաքննական մարմին:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության ՔՀԳՎ եւ Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքների շնորհիվ մայիսի 24-ին կամավոր բաժին է ներկայացել Գյումրիի բնակիչ Դավիթ Ք-ն, որը Թումանյանի բաժնի կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

◆

«Հետախուզում-2019» համալիր-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Թումանյանի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների եւ բացատրական աշխատանքների շնորհիվ մայիսի 25-ին ոստիկանության Թումանյանի բաժին է ներկայացել 63-ամյա Սեյրան Ա.-ն, որը 2011 թ. նոյեմբերից ոստիկանության Թումանյանի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Մայիսի 24-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, ստացված տեղեկություններն իրացնելով, Չարենցավան քաղաքից բերման են ենթարկել 1981 թ. ծնված Գագիկ Խ-ին, որը հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

◆

Մայիսի 24-ին ոստիկանության Արմավիրի մարզային վարչության եւ Արմավիրի բաժնի քրեական հետախույզները համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Նորապատ գյուղի գյուղմթերքի շուկայից բերման են ենթարկել Արարատի մարզի Գոռավան գյուղի բնակիչ Արսեն Գ.-ին, որը ոստիկանության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվում էր գողության մեղադրանքով:

Պարզվել է, որ նա մայիսին Նոր Հաճընի տներից մեկի բակից գյուղտեխնիկա եւ շինարարական գործիքներ է գողացել ու վաճառել, մեկ ուրիշի ավտոտնակից հափշտակել է վեց անվադող՝ անվահեցերով, գազի բալոն, պղնձե մալուխ, զոդման սարք, կենցաղային իրեր, որոնք դարձյալ վաճառել է: Օգտվելով Արագածոտնի մարզի Արուճ գյուղի տներից մեկի դարպասը բաց լինելու հանգամանքից՝ մուտք է գործել տարածք եւ աշխատանքային գործիքներ գողացել:

◆

Մայիսի 24-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Դավիթաշենի 1-ին թաղամասից բերման է ենթարկվել 1991 թ. ծնված Դավիթ Գ.-ն, որը հետախուզվում էր գողության մեղադրանքով:

◆

Մայիսի 23-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 43-ամյա Աղասի Հ.-ն, որը 2015 թ. հուլիսից ոստիկանության Մուշի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 268 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախույզների բացատրական աշխատանքների շնորհիվ մայիսի 23-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին է ներկայացել 50-ամյա Սամվել Ղ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ժամանակի միավոր Հռոմեացի կայսր
Կանեփաթել
Ներքին այրման շարժիչ «Մուսկատ»
Դեկան
Կենդանաշրջան
Սիրո եւ գեղեցկության աստվածուհի
Բերդ, Տարոն գավառ
Մոհիկան, իրոկեզ
Ծաղկեփունջ կազմելու արվեստ
Խորհրդ. տիեզերագնաց
Հին հուն. ճարտարապ. ոճ
Ճանապարհի ընկեր
Հին նետողական զենք
Փայտոջիլ
Պտղատու ծառ
Վարած արտ
Մթերք
Աշնակ
Ֆրանս. քաղաք
Ճախարակ
Ասր
Հայր եւ որդի իտալ. ծովագնացներ
Իմաստասեր
Աղջիկ
Ափսե
Քիմ. տարր, գազ
Ուղիղ, արդար
Առաքյալ
Կուբա
Մամոնտ
Պելե, Գարինչա
Համեմունք
Անտիկ շրջ. հույն նկարիչ
Գետ, Ղազախստան
Տարածք շենքերի միջեւ
Քաղաք, Չինաստան
Երկարութ. միավոր
... Խայամ
Դերանուն
Բուրգ, գլան
Երգչական ձայն
... Գվինեա
Խորհրդ. կինոռեժ.
Հանքանյութ
Եկեղեց. երգիչ
Օպերային մեներգ
Կողպեք
Ջ. Լոնդոն, հերոս
Խնդրագիր
Չկան մարմնի մաս
Լեռն. համակարգ, ՌԴ
Ազոտական թթվի աղ
Կանաչեղեն
Նավթայուղ
Որսորդական շուն
Պիրենեյների գագաթը
«Իվան ...»
Լերմոնտով, բանաստ.
Սալվադոր ...
Բեղավոր ծուկ
Հարսի կողքին
Ամեդեո ...
... Հովհաննիսյան
Փայլուն խեցի
Ապառաժ
Մոլորակ
Մաթեմ. գործողություն
Բրազիլ. գրող
Թութակ
... Խաչատրյան
Կոնֆետ
«Թշվառ ...ն»
Հոմերոս
Սամսոն եւ ...
Ռուս լեզվաբան
Լարավոր նվագարան
Զիգզագ ճանապարհ
Կրծող կենդանի
Հարեւան
Օղակաձեւ թխվածք
Դեղալոս
Ասիացի կնոջ հագուստ
Իսպան. թավջուքակահար
Ռուսաստանի տարածաշրջ.
Լեհուհի
Մաժոր, մինոր
Ֆա, սոլ
Ուղտ
Աքար, կաքավ
Ջրային թռչուն
Պարկավոր արջ
Դերձակի պիտույք
Երեւելի պաշտոնյա, Հին Հռոմ
... սթեռլինգ
Հնագույն երկիր, Հայկ. լեռնաշխարհի
... Խաղազան
Մարսի արբանյակ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլյան 31.05 - 06.06

Խոյ - Հաճախ եք վիճում գործընկերների հետ՝ ինքներդ էլ չհասկանալով ձեր տարածայնությունների իրական պատճառը:

Ցուլ - Ցանկալի չէ զբաղվել ուշադրություն պահանջող աշխատանքով: Սխալներն ուղղելը հեշտ չի լինի:

Երկվորյակ - Լավ եք կարգավորում մանր խնդիրները, ինչպես եւ ծանոթ գործերը: Խուսափեք ավելորդություններից:

Խեցգետին - Հնարավորություն ունեք հաջողության հասնել: Դրա համար պահպանեք ինքնատիրապետումը եւ հավատարիմ մնացեք սկզբունքներին:

Առյուծ - Իրավիճակը արագ է փոխվում, անընդհատ նոր հանգամանքներ են առաջ գալիս, բայց չեք հրաժարվում մտածածից:

Կույս - Շաբաթվա երկրորդ կեսին կարելի է պլանավորել առավել կարեւոր գործերը:

Կշեռք - Էական փոփոխություններ կլինեն, որոնք կվերաբերեն անձնական, ընտանեկան գործերին:

Կարիճ - Կարելի է աջակցություն ստանալ ազդեցիկ մարդկանցից եւ նրանց օգնությամբ իրականացնել վաղեմի ծրագիրը:

Աղեղնավոր - Հավանական են շահավետ գործարքներ: Ուշադրություն դարձրեք ընտանիքի անդամների հետ հարաբերություններին:

Այծեղջյուր - Հնարավոր է հասկանաք, թե ինչ սխալներ եք արել նախկինում, եւ փորձեք շտկել դրանք:

Ջրհոս - Իրատես եք եւ պատրանքներ չեք կառուցում, ինչը օգնում է լուծել շատ հարցեր:

Ձուկ - Կարող եք ելք գտնել տարբեր իրավիճակներից դուրս գալու եւ ուրիշներին խորհուրդ տալու:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. d4-e5 b6:d4 2. e5:e5x

Խնդիր N2 1. d4-e5 d6:f4 2. d2-e3 f4:d2 3. e1:a5:d8:a1x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.05.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: